



Թարմ երիտասարդությունը կորսնցուցած կրքի խելագար սպառնալիքներով, կնամուժը եւ եսասէր ամենայն առաջ, որ հնգիկ փրկիստիայութեան վարդապետութեամբ կը ջանայ պարտըկել իր ստորնութիւնը անմեղունակ էլիզին աչքերուն եւ հոգիին առջեւ: Սա, յաղթահարուած ու բռնի համոզուած իր զգացած սիրոյն, կը դառնայ զոհը բռնատէր սիրողին, մինչեւ որ նէ ա'լ յոգնած զաւակներ պարզեւելէ ա- նոր, կը խորհի չորրորդ գալիքին արգելք հանդիսանալ մահաբոյր ըմպելիքով մը: Այդ արարքը պատճառ կ'ըլլայ որ Գէորգ պէյ վտարէ էլիզը տունէն: Եթէր ամիս տեւող տառապանքէ վերջ, ինքնաբերա- բար տէր կը դառնայ չքնաղ էլիզին պա- րահանդէսի մը մէջ, որպէսզի նէ չդառ- նայ որս ուրիշներու:

Զարուհի Յ. Պահրի լաւ մշակած է իր նիւթը եւ յաջողած Գէորգ պէյի նկարա- գիրը արտայայտելուն մէջ: Սակայն իբր նիւթ՝ վէպը չունի ոչ մէկ կառուցիչ դա- ղափարաբանութիւն, կամ շնկերային փի- լիստիայութիւն, որ օգտակար ըլլայ:

Մոնումենտալ կեանքի զաղափարականն ալ կը պակսի: Եթէ Գէորգ պէյ՝ թողուով իր ամուրիի ցոյս կեանքը՝ էլիզին մէջ գտնէր իրապէս, ինչպէս կը ներկայացուի հոն, իր հաստատուն նկարագիրը՝ որպէս բնութանքի հայր ու հաւատարիմ ամուսին, վէպը կը ստանար զուգէ բարոյական նը- պատակ մը եւ կը դառնար շինիչ: Բայց Գէորգ պէյ բռնաւոր մըն է, որ իր գաղտ- նածածուկ անհաստատութիւններով կը դաւաճանէ էլիզին, եւ հետեւաբար ոչ մէկ կերպով կրնայ նկատուիլ որպէս տիպար, որպէս գլխաւոր անձ մը վէպին:

Անշուշտ հեղինակուհին ուզած է մնալ իրականութեան սահմաններուն մէջ, եւ ուզած է տալ պատկերը անձերուն այն- պէս՝ ինչպէս եղած են կեանքին մէջ: Կ'են- թադրեմ թէ իր ազգիւրներն ալ հարազատ են միջավայրին, իրական անցուղարձե- րուն, զորս տեսած կամ յսած է, իբր վկայ ակնանկաւոր կամ ակնանատես:

Դիտողութիւնն պարզապէս անոր հա- մար՝ որ ժողովուրդներու հոգեկան ա- ողջ ապրումներու կենսունակութեան համար հարկաւոր է միշտ ուղղել կամքերը դէպի բարին, լուսաւորել մտքերը եւ ա- ուջնորդել զանոնք դէպի զաղափարակա-

նի բարձրութիւնները, դրական ինչ ձեւի տակ ալ ըլլայ: Բանաստեղծութեամբ, վէ- պով, թատրոնով եւ կամ փիլիսոփայական փորձերով:

Տիկին Զ. Յ. Պահրի, սակայն, ունի դրելու դիւրութիւնը, արտայայտելու շը- նորհը, նիւթը պատկերացնելու կարողու- թիւնը: Եւ ասիկա արդէն մեծ բան է, ինչ որ կը պակսի դրողէտի անուան տակ պար- ծող մեր կարգ մը ուրիշ գրողներու, ինչ- պէս ըսինք վերեւ: Իր վէպերը պիտի մնան որպէս յուշարձաններ իրապաշտ ոճի, յետ ուսմանթիւք վէպերու Տիւսարի, Սիպիլի, աւելցնելով շարքը հայ վիպասանուհիներու գործերուն:

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ

~ ~ ~

ՀԱՐԻԻՐ ԺԱՄ ԱՅԻԹԱՊԻ ՄԵՋ. - Յու- շեր եւ տպաւորութիւններ: Գրեց Երուանդ Քիւչիւքեան: Պէյրութ, տպ. Զանաւէր, 1953, էջ 48, մեծ. 21×13. 50: Գին 50 լիւր. դաւ:

Պարագաներու բերումով, վաճառականի հանգամանքով, պանդուխտի 35 տարուան ցուպը ձեռքին, Պր. Երուանդ Քիւչիւքեան բախտը կ'ունենայ տեսնելու իր ծննդա- վայրը (1951, Դեկտ.), իր տունը, համրու- րելու անոր դուռը, ծունկի գալու պապե- նական ակութիւն առջեւ, ուր մանուկի հէ- քեթաթային օրիւ անցուցած էր երբեմն:

Հարկէր ժամ Այնթապի մէջ. մենք պար- զապէս չորս օր պիտի ըսէինք: Վաճառա- կանի, մանուսանգ ծխախոտի վաճառակա- նութեամբ զբաղողին համար թանկագին են ժամերը. ինչքան գործառնութիւններ հա- րիւր ժամուան մէջ: Եւ խեղապէս Պր. Եր. Քիւչիւքեանի համար այդ հարիւր ժամերը արժած են ամէն ինչ. հոգ չէ թէ հիմա այլեւս երազ թուին: Այդ հարիւր ժամուան մէջ ամբողջ հարիւր եւ աւելի տարիներու շէն-շող կեանք մը վերապրած է ան մտ- վին, ամբողջ քաղաք մը յարութիւն առած է անոր յիշողութեան մէջ, իր թողերով, նեղիկ փողոցներով, եկեղեցիներով, գլորոց- ներով, խանութներով եւ փուռերով: Ու այդ հարիւր ժամը կարծես կ'ուզէ բիւրե- ղացնել կարճ տեւողութեան մը ընդմէջէն դարեր տեսնելու անզուսպ տենչը:

Ծննդավայրի սիրով կը համակուի ըն- թերցողն ալ, նոյնիսկ եթէ Այնթապի անու- նը միայն լսած ըլլայ. չէ՞ որ ան ալ իր հայ- րենի երկրին մէկ բնակիչն է, ու պատուական մէկ բնակիչը, Կիլիկիոյ Աթէնքը (ըստ հե- ղինակին), որուն եկեղեցիին զանգակը տա- կաւին իր տեղը անասան կը մնայ. ու կարծես լեզուակը պիտի շարժի խաղաղու- թեան եւ երջանկութեան ժամը հնչեցնելու: Բայց ան կը մնայ կախ, նոյն իր ծուռ դիրքով, ու կիրակի օրով ալ համար է:

Հեղինակը իր արտայայտութիւններուն մէջ շատ զուսպ է եւ հաւասարակշիւ, ան- կողմնակալ եւ առանց մոլեռանդութեան. իր խորհրդածութիւններուն, յիշողութեան մաս չին դէպքերուն եւ ներկայ պատկերներուն հետ խառն՝ կը նկարագրէ Այնթապի ներ- կայ վիճակը, որ շատ խանդավառող բան մը չէ: Առանց գրական եւթնութիւն, գրեթէ անպաճոյճ բառերով եւ բնական պարզու- թեամբ պատմուած դրուագ մըն է բոլորը: Նախապէս հրատարակուած էր «Յուսարեք» օրաթերթին մէջ, իբրեւ համարողի յուշեր, Այնթապէն վերադարձին. փոքրիկ տետրա- կով մըն ալ արտատպելու գաղափարը եկած է հայրենակիցներու խանդավառութենէն. հայրենի երկրէն եկող ծիծեռնակ մը միթէ չի՞ արծաթներ հին յիշատակներ, լուսաւոր յիշատակներ, կարօտը հայրենի երգիքին, դարունին ու ծիծաղին:

Վերջին պահուն տխուր շեշտով կը զգացնէ որ օտար մըն էր նոյնիսկ իր ծննդավայրին մէջ, որմէ ժամ առաջ կ'ուզէ մեկնիլ. հա- րիւր ժամը շատ է եկեր. այս սրբան փո- լիւր ժամը շատ է եկեր. ու կը փոխութիւն 35 տարուան մէջ...: Ու կը մեկնի, հետը Եգիպտոս տանելով իր մեծ հօր երբեմնի խանութէն գնուած յիշատակի առարկայ մը՝ աճիւղ գոշաղը մը, ինչպէս նաեւ «պարսիկներ»՝ այն փուռէն՝ ուր իր հայրն էր աշխատած, եւ որուն դրան իր հայրն էր աշխատած էր հեղինակին մեծ առջեւ նախապաշտած էր հեղինակին մեծ հայրը: Այսքան միայն. հայրենի հողէն բերուած քանի մը փշրանքներ, զոր արցունքով կ'օժեն Նեղոսի ափին հեղինակին մայրն ու հայրենակից բարեկամներ:

«Պարսիկներ» ուն նման՝ այս գրքոյկն ալ հայրենի երկրէն փրցուած ափ մը հող է, ձօնուած Այնթապի եւ բոլոր հայ պան- ղուխներուն:

~ ~ ~

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍ ՄԱՐ- ԳԱՐԵԱՆԻ ԵՒ ԶԻՒՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱ- ՄՈՑ ՊԱՏՄԱԿԱՆՆ. — Տպ. Ի Պրիլի- ֆիլտ, Նիւ ձէրգի (Մ. Ն. Ամերիկա), 1951, էջ 240, մեծութիւն 15×23:

Ոչ լոկ ընտանեկան յիշատակներու, այլ ազգային պատմութեան համար արժէքա- լոր յուշերու հաւաքածոյ մըն է, զոր կը ներկայացնէ Պօղոս Մարգարեան, բնիկ Ատանայի (ծն. 1874), հրատարակելով իր ինքնակենսագրութիւնը եւ զիւր ընտանիքի անդամոց պատմական:

Պարզ, անսեթեւեթ, մեկին, առանց դը- րական զգեստաւորումի կը ցուցադրուին ուշագրաւ դէպքեր ու դէմքեր, ժամանա- կագրական կարգով 1890-1946. գլխաւոր հանգրուաններն են Կիլիկիա, Լիբանան, Կիպրոս, Ֆրանսա, Ամերիկա:

Ականատեսի մանրամասն նկարագրու- թիւնները Ատանայի 1909 Ապրիլ 14-ի ջարդին մասին՝ կարեւոր վկայութիւննե- րով կ'օժտեն մեր պատմական տեսութիւն- ները:

Ընկերային տեսակէտով եւս, առեւ- տրական իր դործունէութեան ընթացքին ստացած փորձառութեամբ, շահեկան խորհրդածութիւններ կը յայտնէ հեղինա- կը, երեսան հանելով հաւատարմութեան եւ անվստահութեան հակընդդէմ նկարա- գիրներ, մարդկային նկատումներու, նա- խանձի եւ ազահութեան տխուր պատկեր- ներ, որոնք վիպային երեւոյթ մը կու տան զրբին: Դժբախտ իրականութիւններ են, որոնց յաղթած է ժիր ջանքն ու յարատե- ւութիւնը:

Հեղինակը երկար տարիներէ ի վեր Ա- մերիկա հաստատուած է. իր զաւակներն ալ (Հայկ, Գարեգին, Նուպար) ընտանի- քի հայրեր են: Բայց աւա՞ղ... Թոռնիկ- ները կը կոչուին Փօլ, Ռաճրոս, Զարլոս, Ռօպըրթ, Ճոնաթան, Պէյլըի: — Տխուր իրականութիւն... մարդ ակամայ կը խոր- հրդածէ թէ ուր պիտի վերջանայ մեր սերունդը, մեր ազգասէր եւ հայ անունին համար մեռնող սերունդը, օտարութեան այդ ափերուն վրայ:

~ ~ ~